

**ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ/ADMINISTRATIVE PROCEDURE/
АДМИНИСТРАТИВНЫЙ ПРОЦЕСС**

<https://doi.org/10.59546/18290744-2024.4-6-10>

ՌԱՖԻԿ ԽԱՆԴԱՆՅԱՆ

*Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի ավագ դասախոս,
ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի դատավոր,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
Հայ-Ռուսական համալսարանի դոկտորանտ*

RAFIK KHANDANYAN

*Senior Lecturer at the Department of Theory of Law and Constitutional Law of the Russian-Armenian University,
Judge of the Administrative Court of Appeal of the Republic of Armenia,
Candidate of Law, Associate Professor,
Doctoral Student at the Russian-Armenian University*

РАФИК ХАНДАНЯН

*Старший преподаватель кафедры теории права и конституционного права Российско-Армянского университета,
судья административного апелляционного суда РА,
кандидат юридических наук, доцент,
докторант Российско-Армянского университета*

**ՈՒՂՂԱԿԻ ԴԱՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ
ԸՆԴԱՅՆՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**TRENDS IN THE EXPANSION OF OBJECTS OF DIRECT JUDICIAL
CONTROL IN ADMINISTRATIVE PROCEEDINGS IN THE REPUBLIC OF
ARMENIA**

**ТЕНДЕНЦИИ РАСШИРЕНИЯ ОБЪЕКТОВ ПРЯМОГО СУДЕБНОГО
КОНТРОЛЯ В АДМИНИСТРАТИВНОМ СУДОПРОИЗВОДСТВЕ РА**

Ներածություն

Ժամանակակից հասարակության մեջ նորմատիվ կարգավորումն առանցքային դեր է խաղում քաղաքացիների և կազմակերպությունների իրավունքների կայունության, կարգի և պաշտպանության ապահովման գործում: Այնուամենայնիվ, կանոնակարգերի բազմազանու-

թյունը, դրանց տարբեր ծագումն ու կարգավիճակը հարցեր են առաջացնում դրանց իրավական ուժի համակարգի, ինչպես նաև կիրառման և վերահսկման մեխանիզմների վերաբերյալ:

Սույն հոդվածում քննարկվում են Հայաստանի Հանրապետությունում նորմատիվ կարգավորման մի շարք կարևոր ասպեկտներ, այդ թվում՝ տեղական ինքնակառավարումը, քաղաքացիական ծառայությունը և միջազգային պայմանագրերը: Քննարկվում է տարբեր ծագման և կարգավիճակի կանոնակարգերի նկատմամբ դատական վերահսկողության հարցը, ինչպես նաև, թե ինչպես են այդ գործողություններն ազդում քաղաքացիների և կազմակերպությունների իրավունքների և շահերի վրա:

Վերլուծվում են համայնքային պայմանագրերի նկատմամբ դատական վերահսկողության առանձնահատկությունները, քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերի հաստատումը և միջազգային իրավունքի նորմերի պահպանումը: Նշված հարցերի համատեքստում դիտարկվում է դատական համակարգի դերն օրինականության ապահովման և իրավահարաբերությունների սուբյեկտների իրավունքների պաշտպանության գործում:

Սույն հոդվածի նպատակն է բացահայտել Հայաստանի Հանրապետությունում նորմատիվ կարգավորման արդի խնդիրներն ու ասպեկտները, ինչպես նաև քննարկել նորմատիվ ակտերի օրենսդրությանը համապատասխանության և քաղաքացիների ու կազմակերպությունների իրավունքների պաշտպանության նկատմամբ դատական վերահսկողության մեխանիզմներն ու գործիքները:

Հիմական հետազոտություն

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Ուղղակի դատական վերահսկողության օբյեկտների ընդլայնումը դատավարական պրակտիկայում

Նորմատիվ իրավական ակտերի օրինականության նկատմամբ դատական վերահսկողության ինստիտուտի կայացումն անցել է զարգացման բարդ ճանապարհ: Դա հատուկ է ոչ միան հետխորհրդային պետություններին¹, այլև ուրիշ իրավական համակարգերին: Ընդ որում, նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության նկատմամբ դատական վերահսկողության օբյեկտների ընդլայնումը տեղի է ունեցել հիմնականում ոչ թե քաղաքական իշխանության կամքով կամ նախաձեռնությամբ, այլ դատարանների ակտիվիզմի շնորհիվ: Այլ կերպ ասած՝ դատական վերահսկողության օբյեկտների ընդլայնման հարցում մեծ ազդեցություն են ունեցել ոչ այնքան օրենսդիր կամ գործադիր իշխանության մարմինները, որքան դատարանները:

Հանրահայտ է, որ ԱՄՆ-ում քաղաքական իշխանության ակտերի նկատմամբ դատական սահմանադրական վերահսկողության ինստիտուտը ներդրվել է ոչ թե հիմնադիր իշխանության կամ քաղաքական իշխանության կողմից, այլ ԱՄՆ գերագույն դատարանի կողմից (1803 թ.): Այսպես, XIX-րդ դարի սկզբին ԱՄՆ գերագույն դատարանը, Ջ. Մարշալի նախագահությամբ, երկու կարևորագույն հարցերի վերաբերյալ կայացրեց արտառոց որոշում (Marbury v. Madison). Նախ՝ դատարանն իրեն լիազորեց որոշելու օրենքի համապատասխանությունը Սահմանադրությանը և դրանով իսկ որոշելով դրա վավերականությունը: Երկրորդ, դատարանը սահմանեց ենթադրյալ լիազորությունների վերաբերյալ դոկտրինը, այսինքն՝ այն լիազորությունները, որոնք թեև հստակ նշված չեն Սահմանադրության տեքստում, բայց բխում

¹ Այս մասի տե՛ս *Խանդանյան Ռ.*, Դատական վերահսկողությունը նորմատիվ իրավական ակտերի օրինականության նկատմամբ (պատմաիրավական էվոլյուցիան), Եր., ՀՌՀ հրատ., 2022:

են ընդհանուր սահմանադրական մեկնաբանության տրամաբանունից: Թեև Ամերիկացի հեղինակների մեծ մասը պնդում է, որ ԱՄՆ գերագույն դատարանը, դատական սահմանադրական վերահսկողության համար Սահմանադրության տեքստում չգտնելով անվիճելի հիմքեր, «յուրացրել» է վերահսկողության լիազորությունները², սակայն պատմական առումով կարելի է փաստել, որ այս գործից հետո ԱՄՆ դատական իշխանությունը վերածվեց «հավասարների մեջ առաջինը» և դրեց սահմանադրական վերահսկողության ժամանակակից հիմքերը:

Ֆրանսիայի պետական խորհուրդը, Արևելյան երկաթուղիների ընկերության գործով կայացրած որոշմամբ, Վարչական դատարանի վերահսկողությունը տարածեց ենթաօրենսդրական ռեգլամենտային որոշումների նկատմամբ, այսինքն՝ գործադիր-կարգադրիչ մարմինների ակտերի նկատմամբ: Դրանով վերահսկողությունը տարածվեց գործադիր իշխանության ակտերի աստիճանական կարգության մեջ ամենաբարձր ուժ ունեցող ակտերի վրա³:

Նույնիսկ Եվրոպական միության (այսուհետ՝ ԵՄ) իրավական համակարգում ԵՄ դատարանը, անտեսելով դատական վերահսկողության օբյեկտների վերաբերյալ հիմնադիր փաստաթղթերում առկա կարգավորումները, ընդլայնել է իր վերահսկողության շրջանակը: Օրինակ՝ 1980-ականներին Ֆրանսիայի բնապահպանական կուսակցությունը (French Ecologists) ԵՄ խորհրդարանի որոշումը անվավեր ճանաչելու վերաբերյալ հայց է ներկայացրել ԵՄ դատարան, այն հիմնավորմամբ, որ ԵՄ խորհրդարանի այդ որոշումը խտրականություն է դնում կուսակցությունների միջև: Դատավարական վարույթը նախաձեռնվել էր ԵՄ հիմնադիր պայմանագրի 173-րդ հոդվածի հիման վրա, որն այդ գործը քննելու ժամանակահատվածում ձևակերպված էր հետևյալ կերպ. «Դատարանը վերահսկողություն է իրականացնում Հանձնաժողովի և Խորհրդի ակտերի օրինականության նկատմամբ(...)»: Տ. Կ. Հարթլին նշում է.

«Պայմանագրի 173-րդ հոդվածը միանգամայն հասկանալի է. այն չի պարունակում ԵՄ խորհրդարանի ակտերի մասին հիշատակում: Այնուամենայնիվ, ԵՄ դատարանը վճռել է, որ այն ընդգրկում է նաև խորհրդարանի ակտերը: Դատարանն արձանագրել է, որ համայնքը գործում է իրավունքի գերակայության սկզբունքի հիման վրա, և ինչպես անդամ պետությունների, այնպես էլ համայնքի ինստիտուտների ակտերը՝ Պայմանագրին դրանց համապատասխանելիությունն ապահովելու նպատակով հանդիսանում են դատական վերահսկողության օբյեկտ: Այնուհետև դատարանը նշել է, որ ԵՄ-ի պայմանագրում ամրագրված չէ Խորհրդարանի ակտերը վերահսկելու դատարանի իրավասությունը, քանի որ ԵՄ պայմանագրի կազմման ընթացքում խորհրդարանը չունեւր երրորդ կողմերի շահերը շոշափող ակտեր ընդունելու իրավասություն: Դատարանը եզրակացրել է, որ եթե խորհրդարանի ակտերը դատական վերահսկողության օբյեկտ չհամարվեն, ապա դա կհակասի Պայմանագրի ոգուն: Այսպիսով, Դատարանը որոշել է, որ Պայմանագրի 173-րդ հոդվածն ընդգրկում է նաև խորհրդարանի ակտերը: Նման որոշման փրամաբանությունը միանգամայն հասկանալի է. Դատարանը պարզապես արձանագրել է, որ խորհրդարանի ակտերը պետք է ենթակա լինեն վերանայման, հետևաբար դրանք վերանայվում են»⁴:

ՌԴ-ում գործադիր իշխանության մարմինների նորմատիվ բնույթի նամակները, պարզաբանումները ճանաչվեցին որպես դատական վերահսկողության օբյեկտ ՌԴ բարձր դատարանների միջամտության շնորհիվ (այս մասին հաջորդիվ):

² Сафонов В.Н., Конституционное правотворчество в деятельности Верховного суда США, Историко-правовое исследование: монография. М., Проспект, 2023, с. 24-25, 71.

³ Брэбан Г., Французское административное право. Пер. с фр. М.: Прогресс, 1988, с. 363.

⁴ Хартли Т.К., Основы права Европейского сообщества: Пер. с англ. - М.: Закон и право, ЮНИТИ, 1998, с. 90-91.

Ի դեպ, հայկական իրականության մեջ նույնպես հանդիպել են դեպքեր, երբ այս կամ այն իրավունքի պաշտոնական աղբյուրը թեև ՀՀ օրենսդրությամբ չի համարվել դատական վերահսկողության օբյեկտ, սակայն ՀՀ բարձր դատարանները դրանք ճանաչել են որպես այդպիսին: Օրինակ՝ ՀՀ Սահմանադրական դատարանը «2017 թվականի ապրիլի 11-ին ստորագրված՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով 10.10.2017 թ. ՍԴԴ-1381 որոշմամբ նշել է.

«Վերոգրյալի հիման վրա ՀՀ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրական դատարանում սույն գործի շրջանակներում նախնական սահմանադրական վերահսկողության առարկա կարող են դառնալ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ հորիզոնական իրավահարաբերություններ կարգավորող և պետության համար պարտավորություններ սահմանող նորմերը: Իսկ վերագրային իրավունքի աղբյուր հանդիսացող, բովանդակային առումով «օրենք» կարեգործիային համապատասխանող և ուղղահայաց իրավահարաբերություններ կարգավորող իրավունքի նորմերը կարող են ՀՀ Սահմանադրական դատարանում սահմանադրական վերահսկողության առարկա հանդիսանալ «հետագա սահմանադրական վերահսկողության» կարգով՝ հաշվի առնելով նաև դրանում ամրագրված որևէ դրույթին իրավակիրատ պրակտիկայում տրված մեկնաբանությունը»:

ՀՀ Սահմանադրական դատարանը ԵԱՏՄ իրավունքի՝ ուղղահայաց իրավահարաբերություններ կարգավորող աղբյուրները, այդ թվում՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքը, որը, ըստ էության, միջազգային պայմանագիր է (դրա հավելվածը)⁵, իրավական ֆիլցիայի միջոցով համարել է օրենք և այն դիտարկել է որպես հետագա սահմանադրական վերահսկողության օբյեկտ: ՀՀ Սահմանադրության 168-րդ հոդվածում ակնհայտորեն միջազգային պայմանագրերը, անկախ նրանից, որ դրանք կարգավորում են պետության ներսում ուղղահայաց հարաբերություններ, հետագա դատական վերահսկողության օբյեկտ չեն:

Ասվածից կարելի է եզրակացնել, որ ուղղակի դատական վերահսկողության օբյեկտների որոշման հարցում սկզբունքային է դատարանների ակտիվիզմը. առանց դրա քիչ հավանական է, որ քաղաքական իշխանությունը սեփական նախաձեռնությամբ կընդլայնի ուղղակի դատական վերահսկողության օբյեկտների շրջանակը: Քաղաքական իշխանության կամավոր ինքնազսպումը (ինքնասահմանափակումը) հնարավոր է սահմանադրականության ռեժիմի և զարգացած քաղաքական մշակույթի պայմաններում:

1.2. Դատական վերահսկողության օբյեկտները որոշելու մեթոդաբանությունը

1.2.1. Դատական վերահսկողության օբյեկտների որոշման պոզիտիվ և նեգատիվ տաքսացիայի մեթոդները: Մինչև դատական վերահսկողության ենթակա նորմատիվ իրավական ակտերի շրջանակը քննարկելը, պետք է ընդհանուր նշել, թե օրենսդիրը ինչ մեթոդներով է որոշում դատական վերահսկողության ենթակա ակտերի շրջանակը: Ընդհանուր կանոնի (generalis clausula - общай клауза) համաձայն՝ վարչական որոշումները, հանդիսանում են դատական վերահսկողության օբյեկտ: Վարչական իրավունքում առանձնացվում են դատա-

⁵ ՀՀ Սահմանադրական դատարանն այս կապակցությամբ նշել է. «Սույն պայմանագրով նախատեսվող ուղղահայաց իրավահարաբերություններ կարգավորող նորմերն (Խոսքը՝ Օրենսգրքի մասին է) իրենց բնույթով հանդես են գալիս որպես օրենքին բնորոշ դրույթներ, որոնց ընդունումը՝ առանց նախնական սահմանադրական վերահսկողության պայմանի, ՀՀ Սահմանադրությունը վերապահել է օրենսդիր մարմնին»:

կան վերահսկողության օբյեկտները որոշելու նեգատիվ և պոզիտիվ տաքսացիայի (գնահատման⁶) եղանակները⁷: Նեգատիվ տաքսացիայի դեպքում օրենսդիրը սահմանում է այն գործերի կամ ակտերի շրջանակը, որոնք ենթակա չեն դատական վերահսկողության: Ընդ որում, եթե ակտերի մի մեծ խումբ ենթակա չլինեն դատական վերահսկողության, ապա «generalis clausula» կանոնը կորցնում է իր իմաստը, քանի որ այս ընդհանուր կանոնի համաձայն՝ վարչական մարմի որոշումները ենթակա են դատական վերահսկողության: Ռուս մասնագետները նշում են, որ նեգատիվ տաքսացիան «բացառություն է՝ օրենսդրի կամքով»⁸:

Դրական տաքսացիան նշանակում է, որ օրենքում թվարկվում են բոլոր այն ակտերը (դրանց տեսակները), որոնք ենթակա են դատական վերահսկողության: Կարգավորման այս մեթոդի կիրառման դեպքում դատական վերահսկողության օբյեկտների ցանկում չհայտնված ակտերը (դրանց տեսակները) դատական վերանայման ենթակա չեն: Դրական տաքսացիայի առավելությունն այն է, որ կասկած չի թողնում, թե որ գործերով է հնարավոր դատական վերահսկողություն, և դրանով իսկ գործող օրենսդրության տեսանկյունից ամուր հիմք է տալիս իրավական նորմերի մեկնաբանման և կիրառման համար: Դրական տաքսացիայի տարբերակներից մեկն, այսպես կոչված, էնումերատիվ (ընդհանրացնող) մեթոդն է, որի ժամանակ դատական վերահսկողության օբյեկտների ցանկում նշվում են ոչ թե վերանայման ենթակա ակտերը կամ դրանց ենթախմբերը, այլ գործերի ընդհանուր խումբը (օրինակ՝ խոսվում է հարկային գործերի մասին):

Եթե այս մեթոդները տեղայնացնենք դատական վերահսկողության ենթակա նորմատիվ իրավական ակտերի շրջանակը որոշելու նկատմամբ, ապա կստացվի հետևյալը: Եթե օրենսդիրը հիմք ընդունի «generalis clausula» կանոնը, ապա պետք է նախ փաստի, որ ՀՀ հանրային իշխանության մարմինների նորմատիվ բնույթի բոլոր ենթաօրենսդրական ակտերը դատական վերահսկողության օբյեկտ են, այսինքն՝ ընդհանուր կանոնն այն է, որ դրանք բոլորը կարող են վիճարկվել ՀՀ վարչական դատարանում: Այս ընդհանուր կանոնը կարող է զուգակցվել ինչպես պոզիտիվ, այնպես էլ նեգատիվ տաքսացիայի մեթոդներով վերահսկողության օբյեկտները որոշելու հետ: Այսպես՝ դրական տաքսացիայի մեթոդի դեպքում օրենսդիրը կարող է ի լրումն ընդհանուր կանոնի, նաև կոնկրետ թվարկել, թե որ մարմինների ենթաօրենսդրական ակտերը կարող են դատարանում վիճարկվել: Իսկ բացասական տաքսացիայի դեպքում օրենսդիրն թեև ընդունում է «generalis clausula» կանոնը, սակայն դրան զուգահեռ նախատեսում է բացառություններ, այսինքն՝ թվարկում է այն ենթաօրենսդրական ակտերը, որոնք ՀՀ վարչական դատարանում չեն կարող վիճարկվել:

1.2.2. Դատական վերահսկողության օբյեկտների որոշման «generalis clausula» իմպլիցիտ կանոնը և պոզիտիվ տաքսացիան ՀՀ վարչական դատավարությունում

(a) «Generalis clausula» իմպլիցիտ կանոնը ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածի 1-ին մասում: ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ վարչական դատարանին ընդդատյա են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց նորմատիվ իրավական ակտերի վիճարկման վերաբերյալ հետևյալ գործերը. ՀՀ նախագահի, ՀՀ կառավարության, ՀՀ վարչապետի նորմատիվ իրավական ակ-

⁶ СУЧ(Ф)УАՅԻԱ [таксация < գերմ. Taxation < լատ. taxare գնահատելի գ. 1. (ֆին.): Գնահատում, սակորոշում, սակադրում, գնորոշում: 2. (մսնգ.): Որակի ու քանակի որոշում: Հայրապետյան Ա. Պ., Օտար բաների բառարան (երկրորդ վերամշակված հրատարակություն): Գիտ. խմբ. Ա. Սարգսյան, Եր., Հեղինակային հրատ., 2011 էջ 553:

⁷ Берени Ш., Самел Л., Барацка Р., Иванчич И., Венгерское административное право / Пер. с венг. М.: Прогресс, 1990. С. 461-462, Зеленцов А.Б., Административная юстиция: учебно-методическое пособие. М.: Изд. РУДН, 2009.

⁸ Зеленцов А.Б., Ястребов О.А., Судебное административное право: учебник. М.: Статут, 2017, с. 234-241.

տերի, գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի, ինչպես նաև համայնքի ավագանու ու համայնքի ղեկավարի նորմատիվ իրավական ակտերի՝ դրանց համեմատ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերին (բացի Սահմանադրություն-նից) համապատասխանությունը վիճարկելու վերաբերյալ գործերը:

Այս հոդվածի տառացի ձևակերպումը թույլ չի տալիս պնդելու, որ Օրենսդիրն ուղղակի դատական վերահսկողության օբյեկտը որոշելու հարցում իմպլիցիտ կերպով հիմք է ընդունել «generalis clausula» կանոնը: Թեև Օրենսդիրը ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածում ուղղակիորեն (էքսպլիցիտ) չի նշել, որ ՀՀ վարչական դատարանին ընդդատյա են հանրային իշխանության մարմինների նորմատիվ բնույթի իրավական ակտերի իրավաչափության վերաբերյալ բոլոր գործերը, սակայն պատմաիրավական տեսանկյունից հարցը դիտարկելիս, պարզ է դառնում, որ Օրենսդիրը փաստացի հիմք է ընդունել «generalis clausula» կանոնը, ըստ որի՝ հանրային իշխանության մարմինների նորմատիվ բնույթի ցանկացած ակտը կարող է համարվել դատական վերահսկողության օբյեկտ:

Օրենսդիրը ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածում պոզիտիվ տաքսացիայի մեթոդով պարզապես թվարկել է այն մարմինների նորմատիվ իրավական ակտերը, որոնք համարվում են դատական վերահսկողության օբյեկտ, սակայն դատական վերահսկողության օբյեկտների ցանկը սահմանելիս, թվարկել է ՀՀ վարչ. դատ. օր.-ն ընդունելու ժամանակահատվածում գործող բոլոր նորմատիվ իրավական ակտերը: Օրինակ՝ ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածի 1-ին մասում խոսվում է գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի նկատմամբ դատական վերահսկողության մասին, իսկ «Իրավական ակտերի մասին» 2002 թ. ՀՀ օրենքով (2018 թ. ուժը կորցրել է) գերատեսչական էին համարվում գործադիր իշխանության գրեթե բոլոր մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների ակտերը⁹: Այս հանգամանքից կարելի է բխեցնել, որ ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածի 1-ին մասում դրված է դատական վերահսկողության օբյեկտների որոշման «generalis clausula» իմպլիցիտ կանոնը. Օրենսդիրը ցանկացել է, որպեսզի նորմատիվ իրավական բոլոր ակտերը համարվեն դատական վերահսկողության օբյեկտ:

Այնուամենայնիվ՝ ՀՀ վարչական դատարանում գերակայում է այլ՝ ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածի տառացի մեկնաբանությունը, որի համաձայն՝ ՀՀ վարչական դատավարության կարգով կարող են վիճարկվել բացառապես ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածում թվարկված նորմատիվ իրավական ակտերը:

(b) ՀՀ վարչական դատարանի նախապարտությունը պոզիտիվ տաքսացիայի մեթոդին: ՀՀ վարչական դատարանը կարծում է, որ ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածի 1-ին մասում առկա կարգավորումն իրականացվել է ոչ թե «generalis clausula» ընդհանուր կանոնի հիման վրա, այլ միայն պոզիտիվ տաքսացիայի մեթոդով: Օրինակ՝ ՀՀ վարչական դատարանը թիվ ՎԴ/9774/05/21 գործով, քննարկելով ՀՀ ազգային ժողովի նախագահի որոշման դատական վերանայման ենթակա լինելու հարցը, 16.09.2021թ. որոշմամբ արձանագրել է.

⁹ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ կետի և 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գերատեսչական նորմատիվ իրավական ակտեր էին համարվում՝ ՀՀ Ազգային ժողովի նախագահի կարգադրությունները, ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշումները, ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումները, ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի որոշումները և հրահանգները, Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի որոշումները, ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի որոշումները, Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի որոշումները, ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի որոշումները, նախարարների, ՀՀ կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինների ղեկավարների հրամանները, մարզպետների, Երևանի քաղաքապետի որոշումները կամ կարգադրությունները:

«ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածի իրավակարգավորումներով սահմանվել է, որ վարչական դատարանին ընդդատյա են հետևյալ մարմինների կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերը վիճարկելու վերաբերյալ գործերը՝ ՀՀ նախագահի, ՀՀ կառավարության, ՀՀ վարչապետի, գերատեսչական, համայնքի ավագանու ու համայնքի ղեկավարի: Տվյալ դեպքում հայցվորի կողմից ներկայացվել է ՀՀ ազգային ժողովի նախագահի կողմից ընդունված ակտը (...) վիճարկելու վերաբերյալ դիմում, մինչդեռ Դատարանը փաստում է, որ ՀՀ Ազգային ժողովի նախագահի կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության վերաբերյալ գործերը, ամեն դեպքում, ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածով ընդդատյա չեն ՀՀ վարչական դատարանին»:

ՀՀ վարչական դատարանը, ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածի տառացի ընթերցման արդյունքում եզրահանգել է, որ եթե որևէ ակտ, անկախ որևէ հանգամանքից, նախատեսված չէ օրենքով նախատեսված այդ ցանկում, ուստի այն չի կարող համարվել դատական վերահսկողության օբյեկտ: Ի դեպ, 2015 թ. Սահմանադրության ուժի մեջ մտնելուց հետո և 2018թ. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» նոր օրենք ընդունելուց հետո ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածը չի համապատասխանեցվել նորմատիվ իրավական ակտերի նոր համակարգին, ուստի այս նորմի նկատմամբ տեքստուալիզմը որևէ կերպ արդարացված չէ:

ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածի տառացի մեկնաբանման արդյունքում ստացվում է անտրամաբանական իրավիճակ: Այսպես՝ ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածում բնականաբար չեն հիշատակվում այն մարմինների ակտերը, որոնք օրենքով չունեն ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր ընդունելու լիազորություն: Իսկ եթե գործնականում ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ ընդունելու լիազորություն չունեցող որևէ պետական մարմին, դուրս գալով Սահմանադրությամբ և օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակից, այնուամենայնիվ ընդունի **փաստացի** նորմատիվ բնույթի որոշում, ապա այդ նորմատիվ բնույթի որոշման իրավաչափությունը ձևական դատական վերահսկողության շրջանակներում չի կարող ստուգվել: Այս վիճակի անտրամաբանականությունն այն է, որ դատական ստուգման կարող են ենթարկվել պետական այն մարմինների ակտերը, որոնք ունեն ենթաօրենսդրական նորմատիվ ակտեր ընդունելու լիազորություն, իսկ այն պետական մարմինները, որոնք առհասարակ չունեն ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր ընդունելու լիազորություն, փաստացի դուրս են մնում դատական նորմավերահսկողությունից: Նման մոտեցումը հակասում է նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության նկատմամբ դատական վերահսկողության ինստիտուտի էությանը:

Իրավաստեղծ լիազորություն չունեցող պետական մարմնի կողմից նորմատիվ բնույթի որոշում ընդունելը «*ultra vires*¹⁰» հայեցակարգի խախտում է, ուստի՝ Դատարանները պետք է հնարավորություն ունենան «*inexistence*¹¹» իրավական չափանիշի հիման վրա ստուգելու այդ որոշման իրավաչափությունը:

Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության նկատմամբ դատական վերահսկողության ինստիտուտի իմաստն այն է, որ դատարանը հնարավորություն ունենա ձևական և

¹⁰ *ultra vires* - լիազորություններից դուրս:

¹¹ *Inexistence* - գոյություն չունեցող: Ֆրանսիական վարչական իրավունքում «*Inexistence*»-ը վարչական մարմնի ակտերի ստուգման հիմքերից է: Այն վերաբերում է վարչական գործողության գոյություն չունենալուն: Որոշ ոլորտներ այնքան կարևոր են, որ կասկածի տակ են դնում ենթադրյալ գործողության կամ որոշման բուն գոյությունը: Դրա օրինակ է ոչ պատշաճ անձի կամ լիազորություն չունեցող անձի կողմից որոշում կայացնելը: Այս մասին տե՛ս *Галлиган Д., Полянский В.В., Стариков Ю.Н., Административное право: история развития и основные современные концепции. М.: Юристъ, 2002:*

նյութական չափանիշներով ստուգել գործադիր իշխանության մարմինների ակտերի իրավաչափությունը, այդ թվում՝ ստուգել, թե տվյալ պետական մարմինն ուներ արդյոք նորմատիվ բնույթի իրավական ակտ ընդունելու լիազորություն:

Այսպիսով՝ ՀՀ վարչական դատարանն ունի բավարար հիմքեր կարծելու, որ ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածի հիմքում իմպլիցիտ դրված է «generalis clausula» ընդհանուր կանոնը, որը զուգակցված է պոզիտիվ տաքսացիայի մեթոդով: Ընդհանուր կանոնի համաձայն՝ դատական վերահսկողության ենթակա են հանրային իշխանության մարմինների նորմատիվ բնույթի բոլոր ակտերը, իսկ դրական տաքսացիայի մեթոդով ընդհանուր կանոնը կոնկրետացված է վերահսկողության ենթակա օբյեկտների որոշակի ցանկով:

(c) *Իրավունքի զարգացման միտումները*: ՀՀ վարչ. դատ. օր.-ի 26-րդ գլուխը նոր խմբագրությամբ շարադրելու վերաբերյալ Օրենքի նախագծում հեղինակներն առաջարկում են ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Վարչական դատարանին ընդդադրյա են ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի՝ օրենքներին, այդ թվում՝ սահմանադրական օրենքներին (այսուհետ՝ օրենքներ), համապատասխանությունը վիճարկելու վերաբերյալ գործերը»¹²:

Այս դեպքում նույնպես չենք կարող միանշանակորեն պնդել, որ Նախագծի հեղինակները ցանկացել են դատական վերահսկողության օբյեկտների որոշման հարցում հիմք ընդունել «generalis clausula» կանոնը: Բանն այն է, որ Նախագծի հիմնավորման մեջ նշվում է.

«Ներկայում վարչական դատարանին ընդդադրյա են ՀՀ Նախագահի, ՀՀ կառավարության, ՀՀ վարչապետի նորմատիվ իրավական ակտերի, գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի, ինչպես նաև համայնքի ավագանու ու համայնքի ղեկավարի նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության վիճարկման վերաբերյալ գործերը: Մինչդեռ, նման սահմանափակ շրջանակ նախատեսելը չի համապատասխանում Սահմանադրության կարգավորումներին, քանի որ նման ակտեր ընդունելու լիազորությամբ օժտված են նաև այլ մարմիններ, ինչպես օրինակ Բարձրագույն դատական խորհուրդը, ինքնավար մարմինները: Հերևաբար, նման սահմանափակ շրջանակի պահպանումը անհարկի սահմանափակում է ենթաօրենսդրական ակտերի նկատմամբ արդյունավետ դատական հսկողության հնարավորությունը»¹³:

Այս հիմնավորումից նկատվում է, որ հեղինակները ցանկացել են դատական վերահսկողության օբյեկտ դարձնել ոչ թե հանրային իշխանության մարմինների՝ բնույթով նորմատիվ ցանկացած իրավական ակտ, այլ՝ պարզապես նման ակտեր ընդունելու լիազորությամբ օժտված են մարմինների ակտերը:

Այնուամենայնիվ Նախագծում առկա մոտեցումը, եթե դառնա օրենքի նորմ, ապա այն պետք է մեկնաբանել «generalis clausula» կանոնի հիման վրա, քանի որ ի տարբերություն պոզիտիվ տաքսացիայի դեպքի, որտեղ կոնկրետ թվարկվում են դատական վերահսկողության ենթակա նորմատիվ իրավական ակտերը, Նախագծում նման թվարկում չի տրվում, ինչը ՀՀ վարչական դատարանի առջև բացում է՝ իրավաստեղծ լիազորություն չունեցող պետական մարմնի կողմից նորմատիվ բնույթի որոշումները «ultra vires» չափանիշի հիման վրա ստուգման ենթարկելու լայն հնարավորություն (այս մասին հաջորդիվ):

Երրորդ՝ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության դատական վերահսկողու-

¹² Էլեկտրոնային աղբյուր՝ <https://www.e-draft.am/projects/1430/about>

¹³ Էլեկտրոնային աղբյուր՝ <https://www.e-draft.am/projects/1430/justification>

թյան ծավալը կախված է նրանից, թե ուղղակի դատական վերահսկողությունը ինչ ակտերի նկատմամբ է իրականացնում՝ միայն դատական («Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի) իմաստով նորմատիվ իրավական ակտերի (ենթաօրենսդրական ակտերի), թե նաև՝ նորմատիվ բնույթ ունեցող այլ ակտերի, օրինակ՝ նորմատիվ բնույթի լոկալ իրավական ակտերի, նորմատիվ բնույթ ունեցող պաշտոնական պարզաբանումների, ինքնատիպ (sui generis) նորմատիվ իրավական ակտերի¹⁴, նորմատիվ պայմանագրերի:

ՀՀ վարչ. դատ. օր.-ի 26-րդ գլխի տեսանկյունից ուղղակի դատական վերահսկողության ընդլայնումը (հստակեցումը) հնարավոր է երկու խումբ իրավական ակտերի նկատմամբ:

Առաջին խումբն այն իրավական ակտերն են, որոնք ՀՀ վարչ. դատ. օր.-ի 26-րդ գլխի տեսանկյունից վիճելի են, թե արդյոք հանդիսանում են ուղղակի դատական վերահսկողության օբյեկտ (օրինակ՝ մարզպետի նորմատիվ բնույթի որոշումներ):

Երկրորդ խումբն այն իրավական ակտերն են, որոնք ՀՀ վարչ. դատ. օր.-ի 26-րդ գլխի տեսանկյունից չեն հանդիսանում ուղղակի դատական վերահսկողության օբյեկտ, սակայն Օրենսդիր իշխանության կամ դատական իշխանության կողմից պետք է ճանաչվեն որպես այդպիսին (օրինակ՝ նորմատիվ բնույթի պաշտոնական պարզաբանումները):

1.3. Դատական վերահսկողության օբյեկտների ընդլայնումը ՀՀ վարչ. դատ. օր.-ի 26-րդ գլխի համարեքսպում

1.3.1. Մարզպետի նորմատիվ բնույթի որոշումները: Մինչև 2018 թ. սահմանադրական բարեփոխումները, մարզպետի կողմից նորմատիվ որոշումներ ընդունելու հարցը կասկածի տեղիք չէր տալիս: Նման հնարավորությունն ամրագրված էր «Իրավական ակտերի մասին» 2002 թ. ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով, իսկ նույն օրենքի 4-րդ հոդված 2-րդ մասում մարզպետների, Երևանի քաղաքապետի որոշումները կամ կարգադրությունները համարվում էին գերատեսչական ակտեր:

Մարզպետի նորմատիվ իրավական ակտերի օրինականության (իրավաչափության) նկատմամբ դատական վերահսկողությունն ամրագրված էր 2007 թ. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով¹⁵: Այսպես՝ նշված օրենսգրքի 135-րդ հոդվածում նախատեսված էր դրույթ, ըստ որի՝ ՀՀ վարչական դատարանին ընդդատյա են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց նորմատիվ իրավական ակտերի վիճարկման վերաբերյալ հետևյալ գործերը (...) գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի, համայնքի ավագանու, համայնքի ղեկավարի որոշումների՝ դրանց համեմատ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ ակտերին (բացի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից) համապատասխանությունը վիճարկելու վերաբերյալ գործերը: Ինչպես նշվեց, մարզպետի որոշումները «Իրավական ակտերի մասին» 2002 թ. ՀՀ օրենքով դիտվում էին որպես գերատեսչական ակտեր, այսինքն՝ Օրենսդիրը հստակ սահմանել էր, որ ՀՀ վարչական դատարանն իրավասու է ստուգելու մարզպետի նորմատիվ որոշումներին՝ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտերին՝ համապատասխանությունը:

ՀՀ իրավական համակարգի 2018 թ. բարեփոխումներից հետո մարզպետի նորմատիվ որոշումները ՀՀ վարչական դատավարության կարգով վիճարկելու հնարավորության հարցը միանշանակ կարգավորում չստացավ:

¹⁴ *Խանդանյան Ռ.*, Նորմատիվ բնույթի ներքին (լոկալ) իրավական ակտերը և դատական վերահսկողության հարցերը, - Եր., «Ձանգակ» հրատ., 2023, էջ 88:

¹⁵ Ուժը կորցրել է 07.01.2014 թ.:

ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածում ուղիղ նախատեսված չէ մարզպետի նորմատիվ որոշումների վիճարկման մասին դրույթ, սակայն դրանից ինքնին չպետք է եզրակացնել, որ դրա իրավաչափության դատական ստուգումը բացառվում է: Այս հարցը կապված է երկու առավել ընդհանուր խնդրի հետ.

Նախ՝ պետք է պարզել, թե իրավակիրառողն ինչպե՞ս է ընկալում նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ ինստիտուտի էությունը, ինչպե՞ս է մեկնաբանում ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածը:

Եթե ՀՀ վարչական դատարանը նախապատվություն տա ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածի ոչ թե տառին, այլ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափության նկատմամբ դատական վերահսկողության ինստիտուտի էությանը, ապա համապատասխան դիմումի առկայության դեպքում պետք է ստուգի մարզպետի՝ նորմատիվ բնույթի որոշման իրավաչափությունը (նույնիսկ եթե մարզպետի որոշումը ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածում հիշատակված չէ)¹⁶: Մինչդեռ, ինչպես նշվեց, ՀՀ վարչական դատարանում գերակայում է ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածի տառացի մեկնաբանությունը, որի համաձայն՝ ՀՀ վարչական դատավարության կարգով կարող են վիճարկվել բացառապես ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածում թվարկված նորմատիվ իրավական ակտերը:

Երկրորդ՝ այս դեպքում ՀՀ վարչական դատարանը կրկին պետք է որոշի, թե ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի որ մեկնաբանությունն է հիմք ընդունում: Եթե այն հիմք ընդունի այդ հոդվածի «գերմանական մոդելի» մեկնաբանությունը, ապա պետք է մարզպետի որոշումը ստուգի միայն ձևական չափանիշի տեսանկյունից: Այս դեպքում Դատարանը պետք է կատարի երկու գործողություն:

1) Դատարանը պետք է ստուգի մարզպետի վիճարկվող որոշումն իր բովանդակությամբ փաստացի նորմատիվ, թե՛ անհատական կամ ներքին իրավական ակտ է:

2) Դատարանում եթե հաստատված համարի, որ մարզպետի որոշումն իր բովանդակությամբ իրոք նորմատիվ իրավական ակտ է, ապա, հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի «գերմանական մոդելի» մեկնաբանությունը, պետք է փաստի, որ մարզպետը, նորմատիվ բնույթի որոշում ընդունելով, դուրս է եկել իր լիազորություններից և այդ որոշումը՝ որպես *ultra vires* ակտ, պետք է ճանաչի անվավեր:

Եթե ՀՀ վարչական դատարանը հիմք ընդունի ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի այն մեկնաբանությունը, ըստ որի՝ Օրենսդիրը ևս կարող է Սահմանադրությամբ նախատեսված մարմիններին, այդ թվում՝ մարզպետին լիազորել ընդունել նորմատիվ որոշումներ, ապա Դատարանը կարող է մարզպետի նորմատիվ որոշումը ստուգել ոչ միայն ձևական, այլ նաև՝ նյութական չափանիշների հիման վրա¹⁷:

Այնուամենայնիվ, ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածում՝ մարզպետի նորմատիվ բնույթի որոշումը՝ որպես դատական վերահսկողության օբյեկտ, նախատեսված չէ: Գործնականում մարզպետի՝ արտաքին ազդեցությամբ նորմատիվ բնույթի որոշումների դատական կարգով վիճարկելու հարցում անորոշություններից խուսափելու համար, Օրենսդիրը պետք է հիմք

¹⁶ ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածը 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունից և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո փոփոխության չի ենթարկվել: Այդ հոդվածում որպես դատական վերահսկողության օբյեկտ նշված է «գերատեսչական նորմատիվ իրավական ակտեր» ձևակերպումը: «Իրավական ակտերի մասին» 2022 թ. ՀՀ օրենքով մարզպետի որոշումները գերատեսչական ակտեր էին, սակայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում նման հասկացություն չի գործածվում:

¹⁷ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի «գերմանական մոդելի» մեկնաբանության և տեքստային-նպատակային մեկնաբանության մասին տես *Ղամբարյան Ա.*, Ենթաօրենսդրական ակտեր ընդունելու լիազորություն ունեցող մարմինների նույնականացումը ՀՀ-ում // Օրինականություն, 2023, № 133, էջեր 61-101:

ընդունի ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի տեքստային-նպատակային մեկնաբանությունը և ՀՀ վարչ. դատ. օր.-ում էքսպլիցիտ սահմանի, որ մարզպետի նորմատիվ իրավական ակտերը դատական վերահսկողության օբյեկտ են:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի *տեքստային-նպատակային մեկնաբանության* տեսանկյունից մարզպետը իրավասու է ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր, եթե Օրենսդիրն նրան նման լիազորություն վերապահի: Նախ՝ մարզպետը ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված մարմին է, քանի որ ՀՀ Սահմանադրության 160-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված է մարզպետի նշանակման և ազատման կարգը, նրա սահմանադրական գործառույթը: Երկրորդ՝ մարզպետը «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով լիազորված է ընդունելու որոշումներ, այդ թվում՝ նորմատիվ բնույթի:

Մարզպետի՝ օրենքով նախատեսված որոշ լիազորությունների իրականացումը ենթադրում է արտաքին ներգործություն, որի ապահովման միջոցը նորմատիվ որոշումներն են: Ընդ որում, տվյալ դեպքում խոսքը գնում է հենց «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի տեսանկյունից նորմատիվ որոշումների մասին: Այսպես՝ «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն.

«Մարզպետը քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառներում՝ բնակչությանը ներգրավում է քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման, տարերային և տեխնածին աղբյուրների հետևանքների վերացման աշխատանքներին»:

Հարց է ծագում՝ մարզպետն այս լիազորությունն իրականացնելու նպատակով ինչ բնույթի որոշում պետք է ընդունի՝ մարզի ամեն մի աշխատունակ բնակչին հասցեագրված անհատական որոշում, թե՛ մարզի բնակչության համար (արտաքին ներգործությամբ) համապարտադիր (նորմատիվ) որոշում: Անկասկած ողջախոհությունից բխում է, որ այս լիազորությունը կարող է իրականացվել առավելապես նորմատիվ որոշում ընդունելու միջոցով: Ընդ որում, ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 182.5.-րդ հոդվածի 9-րդ մասում՝ քաղաքացիական պաշտպանության միջոցառումների, վթարավերականգնողական և այլ անհետաձգելի աշխատանքներին սահմանված կարգով ներգրավումից հրաժարվելու համար սահմանված է պատասխանատվություն: Այս արգելքը խախտելու դեպքում անձին վարչական պատասխանատվության ենթարկելու համար սկզբունքային է նաև այն հարցը, թե մարզպետը մարզի աշխատունակ բնակիչներին ինչ կարգով է ներգրավել աշխատանքներին:

Մեկ այլ օրինակ: «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն.

«Մարզպետն առողջապահության բնագավառում «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքի 20.2-րդ հոդվածով սահմանված կարգով կայացնում է կարանտին սահմանելու մասին որոշում»:

«Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքի 20.2-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ և 4-րդ ենթակետի համաձայն.

«Կարանտին սահմանելու մասին որոշման մեջ նշվում են նաև՝ (...) 4) անհատական պաշտպանության միջոցների օգտագործման պահանջը, 5) անհրաժեշտ կանխարգելիչ, հա-

կահամաճարակային և սահմանափակող միջոցառումների ցանկը, սահմանափակող միջոցառումների կիրառման կարգը, դրանց կիրառման ժամկետը, կազմակերպումն ու իրականացումն ապահովելու համար պատասխանատու մարմինները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի»:

Թերևս անվիճելի է, որ մարզպետի սահմանած՝ անհատական պաշտպանության միջոցների օգտագործման պահանջը կամ կանխարգելիչ, հակահամաճարակային և սահմանափակող միջոցառումների ցանկը մարզի՝ անորոշ (չանհատականացված) թվով բնակչությանը հասցեագրված (արտաքին ներգործությամբ) վարքագծի պարտադիր կանոններ են, որոնց ամրագրման միակ համարժեք ձևը նորմատիվ որոշումն է¹⁸:

1.3.2. Տեղական հանրաքվեով ընդունված որոշումները: ՀՀ իրավական համակարգում նախատեսված է տեղական հանրաքվեի միջոցով որոշումներ կայացնելու հնարավորություն: Դա նշանակում է, որ այս կամ այն որոշումը, որը կարող է լինել նաև նորմատիվ բնույթի ընդունում է համայնքի բնակչությունը՝ անմիջական ժողովրդաիշխանության միջոցով (ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդված): Այս կապակցությամբ մեջբերենք «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի մի քանի վերաբերելի նորմեր:

1) Համայնքի բնակիչների ներկայացրած հարցը համայնքի ավագանու կողմից չընդունվելու դեպքում հարցը (որոշումը) օրենքով սահմանված կարգով կարող է դրվել տեղական հանրաքվեի («Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդված):

2) Հանրաքվե նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցչի կողմից տեղական հանրաքվեի դրվող հարցն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, համայնքի ղեկավարը նշանակում է տեղական հանրաքվե կամ մերժում է տեղական հանրաքվեի նշանակումը, եթե տեղական հանրաքվեի դրվող հարցը հակասում է օրենքին («Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդված):

3) Տեղական հանրաքվեի դրված հարցը կամ որոշման նախագիծը համարվում է ընդունված, եթե կողմ է քվեարկել քվեարկության մասնակիցների կեսից ավելին, բայց ոչ պակաս, քան տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձանց մեկ քառորդը («Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մաս):

4) Տեղական հանրաքվեով ընդունված համայնքի ավագանու որոշումն ուժի մեջ է մտնում տեղական հանրաքվեով ընդունված իրավական ակտի նորմատիվ իրավական ակտերի հրապարակման համար օրենքով սահմանված կարգով հրապարակմանը հաջորդող օրվանից, եթե տեղական հանրաքվեով ընդունված ակտով ավելի ուշ ժամկետ նախատեսված չէ («Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մաս):

5) Տեղական հանրաքվեով ընդունված իրավական ակտի հրապարակումն իրականացվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ տեղական հանրաքվեի դրված նախագծի ընդունման մասին որոշումը հրապարակվելուց հետո՝ ութերորդ օրը, եթե այդ հանրաքվեի արդյունքների հետ կապված վեճով դատարան հայցադիմում չի ներկայացվել («Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մաս):

Այս նորմերի համադրությունից պարզ է դառնում, որ տեղական հանրաքվեի արդյունքում ընդունված որոշումը կարող է ձևակերպվել որպես ավագանու որոշում կամ որպես ինքնու-

¹⁸ Այս մասին տես Ղամբարյան Ա., Խանդանյան Ռ., Մարզպետների նորմատիվ որոշումները և դրանց նկատմամբ դատական վերահսկողությունը ՀՀ վարչական դատավարությունում // ՀՀ սահմանադրական դատարանի տեղեկագիր, 2022, № 3 (107), էջեր 9-40:

րույն իրավական ակտ: Տեղական հանրաքվեի արդյունքներն ամրագրվում են ավագանու որոշման ձևով, եթե հանրաքվեն նախաձեռնվել է այն հիմքով, որ բնակիչների ներկայացրած հարցը համայնքի ավագանու կողմից չի ընդունվել («Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդված):

Բոլոր դեպքերում, անկախ նրանից, թե տեղական հանրաքվեի արդյունքները ինչպես կձևակերպվեն՝ որպես ավագանու որոշում, թե որպես համայնքի բնակիչների որոշում, միևնույն է դա համայնքի բնակիչների ուղիղ կամքի արտահայտման արդյունք է:

Տեղական հանրաքվեի արդյունքում ընդունված նորմատիվ բնույթի որոշումները արդյոք կարող են համարվել դատական վերահսկողության օբյեկտ:

Նախ՝ ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածում տեղական հանրաքվեի արդյունքներում ընդունված որոշումների իրավաչափությունը ստուգելու մասին հատուկ նորմ նախատեսված չէ: Նշված հոդվածում խոսվում է ավագանու որոշումների մասին, սակայն ինչպես նշվեց, տեղական հանրաքվեի արդյունքում կարող է ընդունվել որոշում, որը ձևակերպվում է որպես ինքնուրույն որոշում: Բոլոր դեպքերում, նշված հարցը պետք է ստանա հստակ կարգավորում:

Երկրորդ՝ ՀՀ վարչական դատարանը ինչ կոլիզիոն նորմի հիման վրա պետք է լուծի համայնքի բնակիչների կողմից անմիջական ժողովրդաիշխանության եղանակով ընդունված որոշման և ՀՀ ազգային ժողովի՝ որպես ներկայացուցչական մարմնի կողմից ընդունված օրենքների հակասության հարցը: Առաջին հայացքից այս պարագայում հակադրության մեջ են գտնվում մի կողմից՝ լոկալ նշանակության, սակայն անմիջական ժողովրդաիշխանության արդյունքում ընդունված որոշումը, մյուս կողմից՝ համապետական նշանակության, սակայն ներկայացուցչական մարմնի ընդունված օրենքը:

Արդյոք կարելի է համայնքի բնակչության կողմից անմիջական ժողովրդաիշխանության արդյունքում ընդունված որոշումը որակել ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ: Եթե պատասխանը լինի դրական, ապա ՀՀ վարչական դատարանը տեղական հանրաքվեի արդյունքում ընդունված որոշման և օրենքների հակասության հարցը կարող է լուծել ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա:

1.3.3. Նորմատիվ բնույթի պաշտոնական պարզաբանումները: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդված կարգով տրված՝ պաշտոնական պարզաբանումները, որոնք օրենքով սահմանված կարգով հրապարակվում են: Օրենսդիրը թեև սահմանել է, որ հրապարակվելուց հետո պաշտոնական պարզաբանումը պարտադիր բնույթ չունի, սակայն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների հետ հարաբերություններում անձինք իրավունք ունեն առաջնորդվելու պաշտոնական պարզաբանումով, իսկ պաշտոնական պարզաբանում տված իրավասու մարմինը պարտավոր է առաջնորդվել իր տված պարզաբանումով («Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 6-րդ մաս):

ՀՀ դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՀՀ դատարանները «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 42-րդ հոդվածով սահմանված պաշտոնական պարզաբանումները չեն համարում վերահսկողության օբյեկտ (տես ՀՀ վարչական դատարանը թիվ ՎԴ/2977/05/12 գործով 14.05.2012թ. որոշում):

Կասկածից վեր է, որ պաշտոնական պարզաբանումներն ըստ էության նորմատիվ բնույթի ակտեր են, ունեն արտաքին ներգործություն և կարող են միջամտել մարդու իրավունքներին, ուստի դրանք պետք է գտնվել դատական վերահսկողության ոլորտում: Եթե Օրենսդիրն այս հարցում օրենսդրական փոփոխություններ չձեռնարկի, ապա ՀՀ սահմանադրական դատա-

րանը, ՀՀ Վճռաբեկ դատարանը ունակ են և իրավասու են իրավունքը զարգացնել՝ նորմատիվ բնույթի պաշտոնական պարզաբանումները դատական վերահսկողության օբյեկտների տիրույթ բերելու ուղղությամբ: Այս հարցում օրինակելի է ՌԴ սահմանադրական դատարանի պրակտիկան:

1.3.4. Համատեղ նորմատիվ իրավական ակտերը: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում՝ որպես իրավական ակտի տեսակ, նախատեսված է համատեղ նորմատիվ իրավական ակտը: Օրենսդիրը համատեղ նորմատիվ իրավական ակտը բնորոշել է հետևյալ կերպ.

«համատեղ նորմատիվ իրավական ակտը օրենքով ուղղակի նախատեսված դեպքում ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ ընդունելու իրավասություն ունեցող երկու կամ ավելի մարմինների համատեղ ընդունած նորմատիվ իրավական ակտ է»:

ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածում համատեղ նորմատիվ իրավական ակտերը՝ որպես դատական վերահսկողության օբյեկտ թեև էքսպլիցիտ նախատեսված չեն, սակայն դա չի նշանակում, որ այն գործող կարգավորումների պարագայում չի համարվում դատական վերահսկողության օբյեկտ: Բանն այն է, որ համատեղ նորմատիվ իրավական ակտեր կարող են ընդունել միայն ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ ընդունելու իրավասություն ունեցող անձինք, ուստի համատեղ նորմատիվ իրավական ակտերն ըստ բովանդակության դասական նորմատիվ իրավական ակտեր են, իսկ ըստ ձևի՝ պարզապես երկու իրավասու սուբյեկտների ընդունած ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ է:

ՀՀ վարչական դատարանն առկա օրենսդրական պայմաններում ունի բավարար հիմքեր ՀՀ վարչ. դատ. օր.-ի 26-րդ գլխով սահմանված կարգով ստուգելու համատեղ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը:

Համատեղ նորմատիվ իրավական ակտը ձևական առումով իրավաչափ է, եթե՝

- 1) այն ընդունվել է իրավասու մարմինների կողմից, այսինքն՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ ընդունելու իրավասություն ունեցող մարմինների կողմից.
- 2) Օրենքով ուղղակիորեն նախատեսված է, որ իրավասու մարմինները կոնկրետ հարցով կարող են ընդունել համատեղ նորմատիվ իրավական մարմին:

Այս հարցում հետաքրքիր է ՀՀ առողջապահության նախարարի և Սյունիքի մարզպետի՝ մեկ փաստաթղթով ընդունված ակտը: Այսպես՝ ՀՀ առողջապահության նախարարը 22.09.2022 թ. № 59-Ն հրամանով, իսկ Սյունիքի մարզպետը՝ 04.10.2022 թ. № 391-Ն որոշմամբ հաստատել են մարզպետարանի ենթակայության առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների ընտրության (նշանակման) մրցույթի հայտարարության տեքստը և մրցույթի հավակնորդներին ներկայացվող պահանջները¹⁹:

ՀՀ առողջապահության նախարարը և Սյունիքի մարզպետը վերոնշյալ մրցույթի հայտարարության տեքստը և մրցույթի հավակնորդներին ներկայացվող պահանջները հաստատել են մեկ միասնական փաստաթղթով, սակայն այդ ակտն էքսպլիցիտ չեն որակվել որպես համատեղ հրաման: Ավելին՝ ՀՀ առողջապահության նախարարն այդ կանոնները հաստատել է հրամանով, իսկ մարզպետը՝ որոշմամբ: Այնուամենայնիվ, ակնհայտ է, որ տվյալ դեպքում

¹⁹ Էլեկտրոնային աղբյուր՝ <http://syunik.mtad.am/files/legislation/56688.pdf>

նրանք փաստացի ընդունել են համատեղ հրաման, սակայն, այդ ակտի անվանումը համատեղ հրաման չդնելով, ամենայն հավանականությամբ փորձել են շրջանցել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգավորումները:

1.3.5. Արտաքին ազդեցությամբ պաշտոնի անձնագրերը: «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի համաձայն 4-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի՝ քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագիրը (աշխատատեղի նկարագիր) համապատասխան մարմնի իրավասությունը սահմանող իրավական ակտերից և խնդիրներից բխող քաղաքացիական ծառայողի գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները, շփումներն ու հաշվետվողականությունը նկարագրող և այդ գործառույթները արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքներ ու կոմպետենցիաներ նախատեսող, կառավարման համակարգում տեղակայվածությունը նախատեսող, սույն օրենքով սահմանված կարգով հաստատված փաստաթուղթ է: Նշված օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ համապատասխան մարմիններում քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատում է տվյալ մարմնի գլխավոր քարտուղարը (...): Օրինակ՝ Վարչապետի աշխատակազմի ղեկավարի 2020 թ. սեպտեմբերի 8-ի N 1379-Լ հրամանով հաստատվել է ՀՀ վարչապետի աշխատակազմի կադրերի և անձնակազմի կառավարման վարչության գլխավոր իրավաբան պաշտոնի անձնագիրը: Լոկալ ակտով հաստատված պաշտոնի անձնագրի 3-րդ բաժինում սահմանված են այդ պաշտոնին ներկայացվող պահանջները, օրինակ՝ Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժի կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժի կամ կադրերի և մասնագիտական կողմնորոշման կամ իրավունքի բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժի առկայություն: Պաշտոնի անձնագրերում երբեմն սահմանվում է նաև բարձրագույն կրթություն ունենալու պահանջ:

Գործնականում թեև պաշտոնի անձնագրերն հաստատվում են լոկալ իրավական ակտերով, սակայն այդ անձնագրերը պարունակում է նաև դրույթներ, որոնք ունեն արտաքին ազդեցություն (օրինակ՝ թեկնածուներին ներկայացվող պահանջները), ուստի այդ կանոնների մասով, դրանք պետք է համարվեն նորմատիվ բնույթի ակտերը և ենթակա լինեն դատական ստուգման:

1.3.6. Նորմատիվ բնույթի պայմանագրերը

1.3.6.1. Հաստատման ենթակա միջազգային պայմանագրերը: Իրավական նորմեր կարող են ամրագրվել ոչ միայն դասական («Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի) իմաստով նորմատիվ իրավական ակտերում, այլ նաև նորմատիվ պայմանագրերում: Իրավունքի տեսության մեջ ընդունված է այն մոտեցումը, որ նորմատիվ պայմանագրերը իրավունքի պաշտոնական աղբյուրներ են, այսինքն՝ նման փաստաթղթերում ամրագրվում են իրավական նորմեր²⁰: Նորմատիվ պայմանագրի օրինակ է՝ միջազգային պայմանագիրը, իրավասության փոխանցման վերաբերյալ պետական իշխանության դաշնային մարմինների և դաշնային սուբյեկտների իշխանության իրավասու մարմինների միջև կնքված պայմանագիրը, տեղական ինքնակառավարման մարմինների միջև կնքված պայմանագրերը և այլն:

ՀՀ վարչ. դատ. օր.-ի 26-րդ գլխի տեսանկյունից միջազգային պայմանագրերը որպես դատական վերահսկողության օբյեկտ ճանաչելու հարցը քննարկելիս, նախ պետք է տարբե-

²⁰ Гамбарян А., Даллакян Л., Нормативный договор в системе источников права // Դատական իշխանություն, 2009, № 7/120, էջեր 21-26:

րակել *վավերացված* և *հաստատված* միջազգային պայմանագրերի և օրենքների հակասությունը լուծելու ռեժիմները: Նախապես նշենք, որ ՀՀ վարչական դատավարության կարգով ուղղակի դատական վերահսկողության օբյեկտ կարող են համարվել միայն հաստատված միջազգային պայմանագրերը:

ՀՀ սահմանադրական դատարանն օրենքով սահմանված կարգով՝ մինչև միջազգային պայմանագրի վավերացումը, որոշում է նրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը: Միջազգային պայմանագրերը ՀՀ կառավարության առաջարկությամբ *վավերացնում է* Ազգային ժողովը (ՀՀ Սահմանադրության 116-րդ հոդվածի 2-րդ մաս):

ՀՀ Սահմանադրությունը կարգավորում է միայն *վավերացված* միջազգային պայմանագրերի և օրենքների հակասության դեպքում միջազգային պայմանագրերով նախատեսված նորմերի նախապատվության հարցը, իսկ *հաստատված* միջազգային պայմանագրերի և օրենքների հակասության լուծման վերաբերյալ ՀՀ Սահմանադրությամբ կոլիզիոն նորմ նախատեսված չէ, ինչը կարելի է բացատրել սահմանադրաիրավական այնպիսին կարգավորմամբ, որն առաջին հայացքից բացառում է հաստատված միջազգային պայմանագրի և օրենքի միջև հակասության առկայությունը: Այսպես՝ ՀՀ Սահմանադրության 116-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ օրենքին հակասող նորմեր պարունակող միջազգային պայմանագրերը ենթակա են ոչ թե հաստատման, այլ վավերացման: Այս կապակցությամբ Ա. Ղամբարյանը նշում է երկու նկատառում.

Առաջին՝ «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ միջազգային պայմանագիրը Հանրապետության նախագահի հաստատմանը ներկայացնելու նպատակով ՀՀ արդարադատության նախարարությունը եզրակացություն է ներկայացնում միջազգային պայմանագրում օրենքին հակասող նորմերի առկայության մասին: Այն միջազգային պայմանագրերը, որոնք պարունակում են ՀՀ օրենքին հակասող նորմեր, պարտադիր ենթակա են վավերացման:

Երկրորդ՝ օրենքին հակասող նորմեր պարունակող միջազգային պայմանագրերը վավերացնելուց հետո գործում է ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդված 3-րդ մասում ամրագրված կոլիզիոն նորմը, այսինքն՝ պետք է նախապատվություն տալ վավերացված միջազգային պայմանագրին²¹:

Այնուամենայնիվ, հնարավոր է իրավիճակ, որ միջազգային պայմանագիրը հաստատելու պահին այն չի հակասել ՀՀ օրենքին, սակայն հետագայում ՀՀ օրենքում կատարվել է փոփոխություն, որի հետևանքով հաստատված միջազգային պայմանագրի և օրենքի միջև ծագել է հակասություն: Ռուսական աղբյուրներում առաջարկվում է նման պայմանագրերը ճանաչել ուղղակի դատական վերահսկողության օբյեկտ²²:

Միջազգային պայմանագրերը հաստատվում են ինստիտուցիոնալ և ֆունկցիոնալ իմաստով գործադիր իշխանության մարմինների ակտերով, ուստի այս առումով նման տեսակի պայմանագրերը նման են ենթաօրենսդրական ակտերին: Եթե դոկտրինում և գործնականում ճանաչում ստանա այն մոտեցումը, որ հաստատված միջազգային պայմանագրերի համեմատությամբ ՀՀ օրենքներն ունեն բարձր իրավաբանական ուժ, ապա այս դեպքում հաստատված միջազգային պայմանագրերի նկատմամբ ուղղակի դատական վերահսկողություն սահմանելը կունենա օբյեկտիվ հիմնավորում:

²¹ Պետության և իրավունքի տեսություն, Ոսումնական ձեռնարկ, Հեղ. Խումբ, գիտ. խմբ՝ Ա. Ղամբարյան, Մ. Մուրադյան, 4-րդ լրամշակված հրատ, Եր., 2023, էջ 404:

²² Качанов Р.Е., Судебный нормоконтроль в системе механизмов «стратегического правосудия» // Административное и муниципальное право, 2008, № 9, с. 46-50.

1.3.6.2. Համայնքային պայմանագրերը: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը սույն օրենքով սահմանված կարգով՝ կնքում է Հայաստանի Հանրապետության համայնքների կամ այլ պետությունների համայնքների հետ պայմանագրերը, դրանք ներկայացնում է համայնքի ավագանու վավերացմանը: Նույն օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ համայնքի ավագանին սույն օրենքով սահմանված կարգով՝ իր որոշմամբ վավերացնում է համայնքի կողմից ՀՀ համայնքների կամ այլ պետությունների համայնքների հետ կնքված պայմանագրերը (համայնքային պայմանագրեր՝ հեղ.):

ՀՀ օրենքներին հակասող համայնքային պայմանագրերի նկատմամբ պետք է սահմանել ուղղակի դատական վերահսկողություն: Այս հարցը հատկապես կարևորվում է, եթե նման պայմանագրերով շոշափվեն մարդու (իրավաբանական անձանց) իրավունքները կամ պետության շահերը:

Եզրակացություններ

Ելնելով տարբեր իրավական համակարգերում նորմատիվ իրավական ակտերի օրինականության նկատմամբ դատական վերահսկողության դիտարկված դեպքերից կարելի է անել հետևյալ եզրակացությունները.

Առաջինը, դատարանների գործունեությունը առանցքային դեր է խաղում ուղղակի դատական վերահսկողության օբյեկտների որոշման գործում: Պատմական օրինակները, սկսած *Marbury V. Madison*-ի գործով ԱՄՆ Գերագույն դատարանի որոշումից, վերջացրած ՀՀ Սահմանադրական դատարանի պրակտիկայով, հաստատում են, որ դատարանները հաճախ ակտիվորեն միջամտում են ընդլայնելու նորմատիվ ակտերի նկատմամբ իրենց վերահսկողության շրջանակը: Երկրորդ, դատարանների միջամտությունը կարող է տեղի ունենալ, չնայած հիմնադիր ակտերում այդպիսի լիազորությունների հստակ համախմբման բացակայությանը: Օրինակ՝ ԵՄ դատարանը և ՀՀ Սահմանադրական դատարանը ճանաչել են միջազգային պայմանագրերի նկատմամբ վերահսկողության հնարավորությունը՝ չնայած հիմնադիր փաստաթղթերում ուղղակի նշման բացակայությանը:

Այսպիսով, դատարանների ակտիվությունը կարևոր գործոն է սահմանադրական ռեժիմի և քաղաքական մշակույթի զարգացման և ամրապնդման գործում:

Անդրադարձել է կատարվել ՀՀ վարչ. դատ. օր.-191-րդ հոդվածով սահմանված դատական վերահսկողության օբյեկտը որոշելու հարցում իմպլիցիտ կերպով «**generalis clausula**» կանոնի կիրառմանը: Հիմնավորվում է, որ ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածի վերլուծության արդյունքում կարելի է հանգել հետևյալ եզրահանգումների. Օրենսդիրը ՀՀ վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածում ուղղակիորեն (էքսպլիցիտ) չի նշել, որ ՀՀ վարչական դատարանին ընդդատյա են հանրային իշխանության մարմինների նորմատիվ բնույթի իրավական ակտերի իրավաչափության վերաբերյալ բոլոր գործերը, սակայն պատմաիրավական տեսանկյունից հարցը դիտարկելիս, պարզ է դառնում, որ Օրենսդիրը փաստացի հիմք է ընդունել «**generalis clausula**» կանոնը, ըստ որի՝ **հանրային իշխանության մարմինների նորմատիվ բնույթի ցանկացած ակտը կարող է համարվել դատական վերահսկողության օբյեկտ:**

Նույն հոդվածի տառացի մեկնաբանման արդյունքում ստացվում է, որ չեն հիշատակվում այն մարմինների ակտերը, որոնք օրենքով չունեն ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր ընդունելու լիազորություն և ստացվում է, որ ստուգման կարող են ենթարկվել պետական այն մարմինների ակտերը, որոնք ունեն ենթաօրենսդրական նորմատիվ ակտեր ընդունելու լիազորություն, իսկ այն պետական մարմինները, որոնք առհասարակ չունեն են-

թաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր ընդունելու լիազորություն, փաստացի դուրս են մնում դատական նորմավերահսկողությունից:

Մեր կարծիքով նման մոտեցումը հակասում է նորմատիվ իրավական ակտերի իրավա-
չափության նկատմամբ դատական վերահսկողության ինստիտուտի էությանը, ինչպես նաև
սահմանափակ շրջանակ նախատեսելը չի համապատասխանում Սահմանադրության կար-
գավորումներին:

Այսպիսով, հաշվի առնելով կատարված վերլուծությունները՝ եզրահանգում ենք, որ **ՀՀ
վարչ. դատ. օր.-ի 191-րդ հոդվածի հիմքում իմպլիցիտ դրված է «generalis clausula» ընդ-
հանուր կանոնը**, որը զուգակցված է պոզիտիվ տաքսացիայի մեթոդով և որի համաձայն դա-
տական վերահսկողության ենթակա են հանրային իշխանության մարմինների նորմատիվ
բնույթի բոլոր ակտերը, իսկ դրական տաքսացիայի մեթոդով ընդհանուր կանոնը կոնկրե-
տացված է վերահսկողության ենթակա օբյեկտների որոշակի ցանկով:

Բացի վերոգրյալից՝ կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյուն-
քում աշխատանքում ներկայացվել են հետևյալ եզրակացությունները.

- Քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը, որոնք ունեն արտաքին
գործողություն և հաստատված են օրենքին համապատասխան, ենթակա են դատական վե-
րահսկողության՝ օրենսդրությանը հակասելու դեպքում: Այս վերահսկողությունը կարևոր է
ապահովելու համար, որ պետական մարմինները համապատասխանեն օրենքներին և պաշտ-
պանեն քաղաքացիների իրավունքներն ու շահերը:

- Միջազգային պայմանագրեր - դրանց համապատասխանությունը Հայաստանի Հան-
րապետության օրենսդրությանը պետք է ապահովվի ինչպես վավերացումից առաջ, այնպես
էլ հետո: Եթե օրենսդրության փոփոխությունները հակասություններ են ստեղծում վավերաց-
ված միջազգային պայմանագրի հետ, ապա նախապատվությունը պետք է տրվի վերջինիս:

- Համայնքային պայմանագրերը նույնպես ենթակա են դատական վերահսկողության,
հատկապես ՀՀ օրենքներին հակասելու դեպքում: Այս վերահսկողությունն անհրաժեշտ է
օրինականության ապահովման և բոլոր կողմերի շահերի պաշտպանության համար, ներա-
ռյալ Մարդու իրավունքները և պետության շահերը:

Այսպիսով, տարբեր իրավական ակտերի նկատմամբ դատական վերահսկողությունը
առանցքային դեր է խաղում Հայաստանի Հանրապետությունում օրինականության ապահով-
ման և իրավական կարգի պահպանման գործում:

Ամփոփագիր: Սույն հոդվածում ձեռնարկվում է Հայաստանի Հանրապետությունում նորմատիվ կարգավոր-
ման մեխանիզմների խորը վերլուծություն՝ կենտրոնացած տարբեր տեսակի իրավական ակտերի, այդ թվում՝ հա-
մայնքային պայմանագրերի, քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերի և միջազգային համա-
ձայնագրերի վրա: Հեղինակը մանրամասն քննարկում է նշված փաստաթղթերի հաստատման և վավերացման
ընթացակարգերը, դրանց համապատասխանությունը ազգային օրենսդրությանը, ինչպես նաև ազդեցությունը
դատական պրակտիկայի և դատական վերահսկողության մեխանիզմների վրա:

Հատուկ ուշադրության է արժանանում իրավական կարգավորման ասպեկտներին տեղական ինքնակառա-
վարման համատեքստում, ինչպես նաև քաղաքացիների, կազմակերպությունների և պետության իրավունքների և
շահերի պաշտպանությանը: Հոդվածի նպատակն է բացահայտել հայկական իրավական տարածքում նորմատիվ
կարգավորման և դատական վերահսկողության առանցքային նրբությունները, ինչպես նաև քննարկել երկրում
իրավական համակարգի զարգացման մարտահրավերներն ու հեռանկարները: Հեղինակը կիրառում է վերլուծա-
կան մոտեցում՝ հենվելով արդիական օրենսդրության և արդիական դատական որոշումների վրա՝ նպատակ ունե-

նալով ընթերցողին ներկայացնել քննարկվող հարցերի համակողմանի և խորը ըմբռնումը, ինչպես նաև ընդգծել իրավական ակտերի նշանակությունը հայ ժամանակակից իրավական պրակտիկայում:

Annotation. This article provides a comprehensive analysis of the mechanisms of normative regulation in the Republic of Armenia, focusing on various types of legal acts, including municipal agreements, job position descriptions in the civil service, and international agreements. The authors delve into the procedures for approval and ratification of these documents, their compliance with national legislation, as well as their impact on judicial practice and mechanisms of judicial control.

Special attention is paid to aspects of legal regulation in the context of local self-government, as well as the protection of rights and interests of citizens, organizations, and the state. The aim of the article is to identify key nuances of normative regulation and judicial control in the Armenian legal space, as well as to discuss challenges and prospects for the development of the legal system in the country. Employing an analytical approach and drawing on current legislation and relevant judicial decisions, the authors seek to provide readers with a comprehensive and in-depth understanding of the issues under consideration, while emphasizing the significance of legal acts in contemporary Armenian legal practice.

Аннотация. В данной статье мы предприняли попытку провести глубокий анализ механизмов нормативного регулирования в Республике Армения, сфокусированный на различных видах правовых актов, включая муниципальные договоры, паспорта должностей гражданской службы и международные соглашения. Авторы подробно рассматривают процедуры утверждения и ратификации указанных документов, их соответствие национальному законодательству, а также влияние на судебную практику и механизмы судебного контроля.

Особое внимание уделяется аспектам правового регулирования в контексте местного самоуправления, а также защите прав и интересов граждан, организаций и государства. Цель статьи – выявить ключевые нюансы нормативного регулирования и судебного контроля в армянском правовом пространстве, а также обсудить вызовы и перспективы развития правовой системы в стране. Авторы применяют аналитический подход, опираясь на актуальное законодательство и актуальные судебные решения, с целью представить читателям всестороннее и глубокое понимание рассматриваемых вопросов, а также подчеркнуть значение правовых актов в современной армянской правовой практике.

Բանալի բառեր - Նորմատիվ կարգավորումը, դատական վերահսկողությունը, համայնքային պայմանագրերը, միջազգային պայմանագրերը, պաշտոնի անձնագրերը, օրինականությունը, իրավական պաշտպանությունը, պարտավորությունների կատարումը, քաղաքացիական ծառայությունը, պետության շահերը:

Keywords: Regulation, judicial review, municipal agreements, international treaties, position descriptions, legality, legal protection, obligation enforcement, civil service, state interests.

Ключевые слова: нормативное регулирование, судебный контроль, муниципальные договоры, международные договоры, паспорта должностей, законность, правовая защита, исполнение обязательств, гражданская служба, интересы государства.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Խանդանյան Ռ., Դատական վերահսկողությունը նորմատիվ իրավական ակտերի օրինականության նկատմամբ (պատմաիրավական էվոլյուցիան), Եր., ՀՌՀ հրատ., 2022:
2. Խանդանյան Ռ., Նորմատիվ բնույթի ներքին (լոկալ) իրավական ակտերը և դատական վերահսկողության հարցերը, - Եր., «Զանգակ» հրատ., 2023, էջ 88:
3. Հայրապետյան Ա. Պ., Օտար բառերի բառարան (երկրորդ վերամշակված հրատարակություն), գիտ. խմբ. Ա. Սարգսյան, Եր., Հեղինակային հրատ., 2011, էջ 553:

4. Ղամբարյան Ա., Ենթաօրենսդրական ակտեր ընդունելու լիազորություն ունեցող մարմինների նույնակա-նացումը ՀՀ-ում // Օրինականություն, 2023, № 133, էջեր 61-101:
5. Ղամբարյան Ա., Խանդանյան Ռ., Մարզպետների նորմատիվ որոշումները և դրանց նկատմամբ դատա-կան վերահսկողությունը ՀՀ վարչական դատավարությունում // ՀՀ Սահմանադրական դատարանի տեղեկագիր, 2022, № 3 (107), էջեր 9-40:
6. Ա. Ղամբարյան, Մ. Մուրադյան, Պետության և իրավունքի տեսություն: Ոսումնական ձեռնարկ, 4-րդ լրամշակված հրատ., -Եր., 2023, էջ 404:
7. Сафонов В. Н., Конституционное правотворчество в деятельности Верховного суда США. Историко-правовое исследование: монография. М., Проспект, 2023, с. 24-25, 71.
8. Брэбан Г. Французское административное право. Пер. с фр. М.: Прогресс, 1988, с. 363.
9. Хартли Т.К., Основы права Европейского сообщества: Пер. с англ. - М.: Закон и право, ЮНИТИ, 1998. С. 90-91.
10. Берени Ш., Самел Л., Барацка Р., Иванчич И., Венгерское административное право / Пер. с венг. М.: Прогресс, 1990. С.461-462; Зеленцов А.Б., Административная юстиция: учебно-методическое пособие. М.: Изд. РУДН, 2009.
11. Зеленцов А.Б., Ястребов О.А., Судебное административное право: учебник. М.: Статут, 2017, с. 234-241.
12. Галлиган Д., Полянский В.В., Стариков Ю.Н., Административное право: история развития и основные современные концепции. М., Юристъ, 2002:
13. Гамбарян А., Даллакян Л., Нормативный договор в системе источников права // Դատական իշխանու-թյուն, 2009, № 7/120, էջեր 21-26:
14. Качанов Р.Е., Судебный нормоконтроль в системе механизмов «стратегического правосудия» // Административное и муниципальное право. 2008. № 9, с. 46-50.

Էլեկտրոնային աղբյուրներ

1. <https://www.e-draft.am/projects/1430/about>
2. <https://www.e-draft.am/projects/1430/justification>
3. <http://syunik.mtad.am/files/legislation/56688.pdf>

Խանդանյան Ռ. - Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի ավագ դասախոս, ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի դատավոր, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, Հայ-Ռուսական համալսարանի դոկտորանտ, էլիասցե՝ rkhandanyan@yahoo.com:

Ներկայացվել է խմբագրություն 27.05.2024 թ., տրվել է գրախոսության 27.05.2024 թ., երաշխավորվել է ի.գ.թ., Հայ-ռուսական համալսարանի դասախոս, վարչական դատարանի դատավոր Կ. Զարիկյանի կողմից, ըն-դունվել է տպագրության 16.07.2024 թ.: